

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
AMACBAB24ER4 ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան

«29» հոկտեմբերի 2018թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, այսուհետ՝ Շուկա ստեղծող կամ Բանկ, ի դեմս Բանկի Կանոնադրության հիման վրա գործող Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանի, մի կողմից, և «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ, այսուհետ՝ Թողարկող, ի դեմս Թողարկողի Կանոնադրության հիման վրա գործող Գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանի, մյուս կողմից, միասին անվանվելով կողմեր և հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությունը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Սույն պայմանագրի իմաստով՝

- Արժեթղթեր կամ Պարտատոմսեր՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերը՝ 700,000,000 (յոթ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 7,000 (յոթ հազար) հատ քանակով, յուրաքանչյուրը 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 9.5 (ինը ամբողջ հինգ տասնորդական) տոկոս արժեկտրոնային տոկոսադրույթով, արժեկտրոնների վճարման կիսամյակային պարբերականությամբ, 24 (քսանչորս) ամիս շրջանառության ժամկետով (ԱՄՏՕ՝ AMACBAB24ER4):
- Բորսա՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ն և դրա կողմից կառավարվող կազմակերպված առևտրի համակարգը՝ կարգավորվող շուկա:
- Կանոններ՝ Բորսայի դիտորդ խորհրդի կողմից հաստատված և ՀՀ ԿԲ կողմից գրանցված կանոնները, այդ թվում՝ շուկա ստեղծողի (այսուհետ տեքստում ՇՍ), կորպորատիվ արժեթղթերի առևտրի և այլ կանոններ:
- Մարքեթ-մեյքինգ՝ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձի/անձանց կողմից արժեթղթի/երի երկկողմանի՝ առքի և վաճառքի գնանշումը սահմանելու, արդյունավետ շուկայական գնագոյացումը կազմակերպելու, տվյալ արժեթղթի/երի շուկայի իրացվելիության որոշակի նախապես սահմանված մակարդակ (արժեթղթով/երով գործարքների ծավալ) ապահովելու նպատակով իր անունից և իր հաշվին արժեթղթի/երի միաժամանակ և առքի և վաճառքի հայտերի ներկայացում կարգավորվող շուկայում սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածի ընթացքում:
- ՇՍ կանոններ՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ դիտորդ խորհրդի կողմից հաստատված և ՀՀ ԿԲ կողմից գրանցված «ՇՍ կանոններ»:
- Թույլատրելի գնանշման միջակայք կամ սպրեդ՝ ցանկացած պահին մարքեթ մեյքերի կողմից երկրորդային շուկայում Պարտատոմսերի առք ու վաճառքի գնանշման սահմանափակված միջակայք:

1.2. Սույն պայմանագրում կիրառվող մնացած հասկացությունները ունեն ՇՍ կանոններով սահմանված նշանակությունը, իսկ դրանով սահմանված չլինելու դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և(կամ) Կանոններով սահմանված նշանակությունները:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Շուկա ստեղծողը, ՇՍ կանոններին համապատասխան, ունենալով Բորսայի կողմից շնորհված Արժեթղթերի շուկա ստեղծողի կարգավիճակ, սույն պայմանագրով սահմանված պայմաններով, Բորսայում իրականացնում է Թողարկողի

Պարտատոմսերի շուկայի ստեղծումը (Մարքեթ-մեյքինգ), իսկ Թողարկողը վճարում է դրա դիմաց Շուկա ստեղծողին՝ սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

3. ՄԱՐՔԵԹ-ՄԵՅՔԻՆԳԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 3.1. Շուկա ստեղծողն իրականացնում է Մարքեթ-մեյքինգը ՇՄ կանոնների պարտադիր և անվերապահ պահպանմամբ:
- 3.2. Շուկա ստեղծողն իրականացնում է Մարքեթ-մեյքինգը հետևյալ պայմաններով՝
 - 3.2.1. Առևտրային նստաշրջանի ընթացքում Շուկա ստեղծողի կողմից Թողարկողի Պարտատոմսերի ընթացիկ պահի սպրեդը չպետք է գերազանցի 7%-ը (յոթ տոկոսը)՝ համաձայն ՇՄ կանոնների:
 - 3.2.2. Շուկա ստեղծողի կողմից Բորսայի յուրաքանչյուր առևտրային նստաշրջանի ընթացքում արժեթղթերի գնման և վաճառքի հայտում նշվող գնանշման նվազագույն ծավալը՝ 35 (երեսունհինգ) հատ պարտատոմս:
- 3.3. Շուկա ստեղծողը որևէ կերպ սահմանափակված չէ Թողարկողի կողմից առաջարկվող գնանշման ցուցանիշներով և չի առաջնորդվում որևէ այլ կերպ Թողարկողի ցուցումներով մարքեթ-մեյքինգ իրականացնելիս, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված դեպքերի:
- 3.4. Շուկա ստեղծողը կարող է դադարեցնել Պարտատոմսերի շուկայի ստեղծումը, միայն դրա մասին Թողարկողին 30 (երեսուն) օր առաջ նախօրոք գրավոր տեղեկացնելով, ընդ որում գրավոր տեղեկացումը ուղարկելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Շուկա ստեղծողը պարտավոր է իր մոտ այդ պահի դրությամբ առկա պարտատոմսերը 9.5 (ինը ամբողջ հինգ տասնորդական) տոկոս մինչև մարման եկամտաբերությամբ վաճառել Թողարկողի կողմից ընտրված նոր Շուկա ստեղծողին:
- 3.5. Պարտատոմսերի բացակայության հիմքով Շուկա ստեղծողի կողմից Մարքեթ-մեյքինգ չիրականացվելու դեպքում Շուկա ստեղծողի նկատմամբ Թողարկողի կողմից պատասխանատվության որևէ միջոց կամ տուժանք չի կարող կիրառվել:

4. ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 4.1. Սույն պայմանագրի 2.1. կետում նշված ծառայությունների մատուցման դիմաց Թողարկողը Շուկա ստեղծողին վճարում է ամսական 120,000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամի հաշվարկով (ներառյալ ավելացված արժեքի հարկը):
- 4.2. Սույն պայմանագրի 4.1. կետում նշված ծառայությունների վճարը վճարվում է հետևյալ կերպ Պարտատոմսերը Բորսայում ցուցակելու և Շուկա ստեղծողի կողմից Բորսայում Պարտատոմսերի շուկա ստեղծողի կարգավիճակ ստանալու ամսվանից ներառյալ 12 (տասներկու) ամսվա վճարը, որը կազմում է 1,440,000 (մեկ միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, 10 (տասը) բանկային օրվա ընթացքում փոխանցվում է պայմանագրում նշված Շուկա ստեղծողի թղթակցային հաշվին:
- 4.3. Սույն պայմանագրի 2.1. կետում նշված ծառայությունների վճարի մնացած մասը (ամսական 120,000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ հաշվարկով) Թողարկողը փոխանցում է սույն պայմանագրում նշված Շուկա ստեղծողի թղթակցային հաշվին Բորսայում Արժեթղթերի շրջանառության վերջին օրվանից հետո 10 (տասը) բանկային օրվա ընթացքում՝ ծառայությունների մատուցման ակտի երկկողմանի հաստատման հիմքով:
- 4.4. Բորսայում Արժեթղթերի շրջանառության վերջին օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրերի ընթացքում Կողմերի միջև ստորագրվում է Պարտատոմսերը Բորսայում ցուցակելու օրվանից մինչև Բորսայում Արժեթղթերի շրջանառության վերջին օրը ընկած ժամանակահատվածում մատուցված ծառայությունների

ընդունման ակտը, որում նշվում է տվյալ ժամանակահատվածում Բորսայի առևտրային հարթակում Թողարկողի Պարտատոմսերով կատարված գործարքների ընդհանուր արժեքային ծավալը՝ որպես ծառայությունների մատուցումը հավաստող փաստ (գործարքների առկայության դեպքում):

4.5. Սույն պայմանագրի 4.2. և 4.3. կետում նշված ծառայությունների վճարը վերադարձվում է Թողարկողին, եթե Շուկա ստեղծողը չի մատուցում սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները՝ ներառյալ՝ սույն պայմանագրի 5.6 կետում նշված հիմքերով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Շուկա ստեղծողի կողմից սույն պայմանագրով իր պարտականությունները չկատարելու կամ սույն պայմանագրի 3-րդ գլխով սահմանված պայմանները խախտելու արդյունքում Թողարկողին հասցված վնասը, ներառյալ՝ բաց թողնված օգուտը, ենթակա է փոխհատուցման:

5.2. Սույն պայմանագրի 4-րդ գլխով սահմանված իր պարտավորությունները չկատարելու դեպքում Թողարկողը Շուկա ստեղծողին վճարում է տույժ՝ վճարման ենթակա գումարի՝ 0.13 (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական) տոկոսի չափով՝ վճարման կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

5.3. Շուկա ստեղծողը պարտավորվում է գերծ մնալ այնպիսի գործողությունների ձեռնարկումից, որոնք կարող են հանգեցնել հարկադիր կարգով վերջինիս՝ Մարքեթ-մեյքինգի գործունեության կասեցմանը կամ դադարեցմանը, ինչպես նաև չձեռնարկել կամավոր կարգով Մարքեթ-մեյքինգի գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու գործողություններ: Շուկա ստեղծողը պարտավորվում է նախապես, իսկ անհնարինության դեպքում՝ անհապաղ տեղեկացնել իր՝ որպես Շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցման կամ կասեցման կամ նման ռիսկերի մասին, ինչպես նաև դրա արդյունքում սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարման անհնարինության դեպքում Թողարկողը ազատվում է սույն պայմանագրի 4.2 և 4.3. կետերում նշված ծառայությունների վճարման պարտականությունից և վճարումն իրականացնում է փաստացի մատուցված ծառայության ժամանակահատվածի համար ամսական 120,000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամի (ներառյալ ավելացված արժեքի հարկը) հաշվարկից ելնելով:

5.4. Շուկա ստեղծողը պատասխանատվություն չի կրում իր պարտավորությունների չկատարման կամ սույն պայմանագրով սահմանված պայմանները խախտելու համար, եթե դրա պատճառ է հանդիսացել ՀՀ օրենսդրության կամ Կանոնների փոփոխությունը և դրանց համապատասխանելու անհրաժեշտությունը: Եթե սույն պայմանագրի որևէ դրույթի կատարումը հետագայում հանգեցնում է ՀՀ օրենսդրության կամ Կանոնների խախտմանը, ապա կողմերը բարեխղճորեն բանակցում և համագործակցում են տվյալ դրույթը այնպես խմբագրելու (փոփոխելու համար), որ այն մի կողմից, շարունակի առավելագույնս արտացոլել նախկին խմբագրությամբ այդ դրույթի իմաստը և նպատակը, մյուս կողմից չհակասի նոր ուժի մեջ մտած ՀՀ օրենսդրության կամ Կանոնների դրույթներին:

5.5. Թողարկողը պատասխանատվություն չի կրում Շուկա ստեղծողի կնքած գործարքների համար, ինչպես նաև չի կրում այդ գործարքների ռիսկը:

5.6. Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ պայմանների խախտման պատճառ են հանդիսացել կողմերի կամքից անկախ և նրանց վերահսկողությունից դուրս, անկանխատեսելի հանգամանքները, որոնց թվին, ի թիվս այլոց, դասվում են առևտրային համակարգի անսարքություններն ու խափանումները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

ՇՈՒԿԱ ՍՏԵՂՇՈՂ

ԹՈՂԱՐԿՈՂ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

«ԱՎԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Պուշկինի 19

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 82-84

ՀՎՀՀ 02500518

ՀՎՀՀ 02520007

հեռախոս (37410) 592323,

հեռախոս (37410) 31 88 88

ֆաքս (37410) 547894,

ֆաքս (37410) 54 34 85

էլ փոստ՝ araratbank@araratbank.am

էլ փոստ՝ acba@acba.am

թ/հ՝ 103002101519

հ/հ՝ 103002102202

ՀՀ կենտրոնական բանկ

ՀՀ կենտրոնական բանկ

Գործադիր տնօրեն

Ա. Օսիպյան

Գլխավոր տնօրեն

Հ. Աղդրեասյան

